ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2023 թվականի N 513 - Ա

« ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՄԱՆՈՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.«Սյունիքյան Ամանոր» մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:

2. Հաստատել՝

1) «Սյունիքյան Ամանոր» մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) «Սյունիքյան Ամանոր» մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3)«Սյունիքյան Ամանոր» մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.

4) «Սյունիքյան Ամանոր» մշակութային միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.

5) «Սյունիքյան Ամանոր» մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 18
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ դեկտեմբերի 18-ի
N -Ա որոշման
513

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

1. Հ.Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/

2. Ա.Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական

3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 18 -ի
N _ Ա որոշման
513

ԾՐԱԳԻՐ
«Սյունիքյան Ամանոր» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառմանը կմասնակցեն մարզի երգարվեստի ու պարարվեստի շնորհալիներ, կկազմակերպվեն տոնական հանդիպումներ, Ամանորի այցեր մարզի ԲԿ ծննդատներ՝ 2024թ.հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին, Ձմեռ պապի և Ձյունանուշի այց Կապանի «Արծվաբույն» տարեցների կենտրոնի շահառուներին: Համերգներ կկազմակերպվեն նաև մարզում տեղակայված N զորամասերում:

Միջոցառմանը կընդգրկվեն Արցախից բռնի տեղահանված և մարզի համայնքերում ժամանակավորապես բնակեցված մեր հայրենակիցները, համերգների ընթացքում կներկայացվեն Նոր տարվան նվիրված սյունիքյան և արցախյան ավանդապատումների, ծիսակատարությունների նկարագրերը: Նախատեսված այցերի վայրերում կկազմակերպվի «Սյունիքյան քոչարի» միասնական պարը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 18 -ի
N 513 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

Նպատակը՝

Միջոցառմանը կմասնակցեն մարզի երգարվեստի ու պարարվեստի շնորհալիները, կկազմակերպվեն տոնական հանդիպումներ, Ամանորի այցեր մարզի ԲԿ ծննդատներ՝ 2024թ.հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին, համերգ՝ Կապանի «Արծվաբույն» տարեցների կենտրոնի շահառուների համար: Համերգներ կկազմակերպվեն նաև մարզում տեղակայված N զորամասերում:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, կատարողը՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:
Միջոցառման ղեկավարումը իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմակերպչական կոմիտեն և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Միջոցառման ժամկետը և վայրը.

Միջոցառումը անց է կացվելու 2023թ. դեկտեմբեր և 2024թ.հունվար ամիսներին՝ մարզի համայնքներում:

Միջոցառման ընթացքը.

«Սյունիքյան Ամանոր» միջոցառումը կազմակերպվում է ըստ ծրագրի՝ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը:
Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի հետ:

Միջոցառման ծախսերը.

Տոնակատարության անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտի, նվերների, հուշանվերների, սննդի և սպասարկող անձնակազմի/ հոգում են միջոցառման կազմակերպիչները՝ համաձայն հաստատված նախահաշվի:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան

/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 18 -ի
N 513 -Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	**70.0**
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	**45.0**
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	**40.0**
4	Նվերներ	4237	**254.0**
5	Այլ մասնագիտական ծառայություններ	4240	**231.0**
6	Գրասենյակային պիտույքներ	4261	**80.0**
7	Ընդամենը		**720.0**
8	ԱԱՀ		**180.0**
	Ընդամենը		**900.0**

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան

/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ.դեկտեմբերի 18 -ի
N 513 -Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

	Միջոցառմանանվանումը	Ժամանակը	Վայրը
1	«Սյունիքյան Ամանոր» միջոցառում	25.12.2023թ 7.01.2024թ	Սյունիքի մարզ
2	Ամանորի տոնական այցելություն- համերգ՝ «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն ՊՈԱԿ», ուրախ ժամանց	25.12.2023թ	«Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն ՊՈԱԿ»
3	Ձմեռ պապի և Ձյունանուշի այց՝ Կապանի «Արծվաբույն» տարեցների կենտրոն, Ամանորի տոնախմբություն	29.12.2023թ.	ք.Կապան
4	Համերգային ելույթներ մարզում տեղակայված N զորամասերում ուրախ ժամանց	30.12.2023թ	ՀՀ Սյունիքի մարզ N զորամասեր
5	Տոնական այց՝ 2024թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին	2.01.2024թ.	Մարզի համայնքներ Կապան, Քաջարան, Մեղրի ԲԿ-ներ
6	Տոնական այց՝ 2024թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին	3.01.2024թ	Մարզի համայնքներ Սիսիան, Գորիս ԲԿ-ներ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101